Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2024 թվականի հոկտեմբերի 1-5-ը

Ղրղզստանի Հանրապետություն (ք. Բիշքեկ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

- Աշոտ Մուրադյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ,
- Նարինե Ֆահրադյան - ՀՀ ՊԵԿ Միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցության բաժնի գլխավոր հարկային տեսուչ, բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
- Հեղինե Նաջարյան - ՀՀ ՊԵԿ «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ տվյալների փոխանակման պատասխանատու

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղրղզստանի Հանրապետություն, ք. Բիշքեկ, հոկտեմբերի 1-ից 5-ը

3. Հրավիրող կողմը՝

Ղրղզստանի Հանրապետության Ֆինանսների նախարարությանն առընթեր պետական հարկային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել ԱՊՀ մասնակից պետությունների Հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի (Координационный совет руководителей налоговых служб государств – участников СНГ - ԱՊՀ ՀԾՂՀԽ) 31-րդ նիստին, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը, նիստի ընթացքում նախատեսվող քվեարկություններին, ինչպես նաև ԱՊՀ ՀԾՂՀԽ նիստի նախօրեին կազմակերպվող փորձագետների նիստին:

5. Քննարկված թեմաները՝

Ս/թ հոկտեմբերի 2-ից 4-ը կայացած ԱՊՀ ՀԾՂՀԽ հերթական 31-րդ նիստի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում.

- ԱՊՀ ՀԾՂՀԽ-ի մասնակից պետությունների կողմից 2023-2024թ. Աշխատանքային ծրագրի կատարման արդյունքների ամփոփում և 2024-2025թ. Աշխատանքային ծրագրի նախագծի մշակում.
- Մինչև 2030թ. ժամանակաշրջանի համար ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության առաջին փուլի (2021-2025թթ.) իրագործմանն ուղղված միջոցառումների ծրագրի կատարման ընթացքի ամփոփում.
- 2018թ. նոյեմբերի 2-ին ստորագրված «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրության շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքների քննարկում.
- ԱՊՀ ՀԾՂՀԽ անդամ հարկային մարմինների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման համակարգի առկա խնդիրների և էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման բնագավառում հարկային համագործակցության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև համակարգի հետագա զարգացման ուղիների սահմանում.
- 2018թ. նոյեմբերի 2-ին ստորագրված «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» Արձամագրության շրջանակներում նոր ֆորմատներով տեղեկությունների փոխանակման հնարավորության քննարկումը, փոխանակումն արդյունավետ իրականացնելու համար ազգային ներքին նոր ծրագրային ապահովման մշակումը և նոր ֆորմատներով տեղեկությունների փոխանակման թեստային փոխանակման իրականացումը,
- 2023թ. համար ԱՊՀ մասնակից պետությունների հարկային մարմինների կատարած աշխատանքների ցուցանիշների, ինչպես նաև 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային օրենսդրության փոփոխությունների ներկայացում.
- 2023թ. համար ինքնազբաղված և փոքր ձեռներեցության սուբյեկտների հարկման հատուկ (պարզեցված) ռեժիմների կիրառման գծով ԱՊՀ մասնակից

պետությունների ազգային օրենսդրության գործող նորմերը և փոքր ձեռներեցության սուբյեկտների հարկման ցուցանիշները,

- ԱՊՀ մասնակից պետությունների համար հարկային ոլորտի կադրերի պատրաստման, մասնագիտացված վերապատրաստման և որակավորման բարձրացման գծով Բազային կազմակերպության հաշվետվության ներկայացում.

- ԱՊՀ ՀԾՂՀԽ-ի կազմում գործող 7 աշխատանքային խմբերի կողմից կատարված աշխատանքների ամփոփում, ինչպես նաև նոր աշխատանքային խմբի՝ «ԱՊՀ մասնակից պետությունների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացման գծով» ստեղծում.

- նիստի գլխավոր թեմայի՝ «ԱԱՀ-ի վարչարարության թվային լուծումներ՝ վճարման թափանցիկության և վերադարձի հեշտության համար» վերաբերյալ մասնակիցները հանդես են եկել իրենց երկրներում նշված ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին զեկույցներով ու շնորհանդեսներով:

- ԱՊՀ ՀԾՂՀԽ-ի հաջորդ 32-րդ նիստի օրակարգի նախագծի մշակում և գլխավոր թեմաների սահմանում: Նշենք, որ քննարկումների արդյունքում հաջորդ տարվա ՀԾՂՀԽ-ի գլխավոր թեմա է ընտրվել՝ «Ապրանքային հոսքերի վերահսկման համակարգ՝ որպես թափանցիկ առևտուր ապահովելու և ստվերային տնտեսության դեմ պայքարի գործիք»:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումներ են տեղի ունեցել Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության հարկային մարմինների պատվիրակությունների ղեկավարների հետ, քննարկվել են երկկողմանի հետաքրքրություն առաջացնող հարցեր:

Նիստերի ընթացքում ՀՀ պատվիրակության ղեկավար՝ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ պրն. Աշոտ Մուրադյանը, հանդես է եկել զեկույցով՝ ներկայացնելով Հայաստանում վերջին տարիների ընթացքում ԱԱՀ վարչարարության թվային լուծումները, վճարման վերադարձի հեշտացման ուղղությունները հարկային վարչարարության արձանագրված ձեռքբերումները և ապագա ծրագրերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԱՊՀ ՀԾՂՀԽ-ի 31-րդ նիստի ընթացքում՝ խորհրդի նախագահությունն անցել է Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության նախագահին: Որոշվել է, որ 2025թ. նախատեսվող ԱՊՀ ՀԾՂՀԽ հերթական նիստն անցկացվելու է Ռուսաստանի Դաշնությունում և Խորհրդի նախագահությունն անցնելու է Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայությանը:

ԱՊՀ ՀԾՂՀԽ-ի 31-րդ նիստի արդյունքներով ստորագրվել են խորհրդի ղեկավարների և փորձագետների նիստերի արձանագրությունները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նիստի ընթացքում քննարկվել են գալիք տարում իրականացվող մի շարք ծրագրեր, այդ թվում.

- Մինչև 2025 թ. ապրիլի 1-ը իրականացնել նոր ֆորմատներով տեղեկությունների փոխանակման փորձնական փոխանակում:
- Մինչև 2025թ. փետրվարի 1-ը մշակել ազգային ծրագրային ապահովում՝ նոր ֆորմատներով տեղեկությունների փոխանակման փորձնական փոխանակում իրականացնելու համար:
- 2025թ. տեղեկությունների փոխանակումը իրականացնել նոր ֆորմատներով:
- Ստեղծել նոր «ԱՊՀ մասնակից պետությունների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացման գծով» աշխատանքային խումբ:
- Ստեղծել նոր «ԱՊՀ մասնակից պետությունների հարկային ծառայությունների երիտասարդ մասնագետների գծով» աշխատանքային խումբ:
- 2025թ. ընթացքում անցկացնել տեղեկությունների փոխանակման աշխատանքային խմբի հանդիպումները Ռուսաստանի Դաշնությունում, երիտասարդների ֆորումը, ինչպես նաև «հարկային վարչարարությունում հաճախորդամետ մոտեցումների գործիքների կիրառման» թեմայով միջոցառումները:

- Խորհրդի կողմից հաջորդ տարվա ՀԾՊՀԽ-ի գլխավոր թեմա է հաստատվել՝ «Ապրանքային հոսքերի վերահսկման համակարգ՝ որպես թափանցիկ առևտուր ապահովելու և ստվերային տնտեսության դեմ պայքարի գործիք»:

- 2025թ. ընթացքում իրականացնել սեմինար՝ 2018թ. նոյեմբերի 2-ին ստորագրված «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրության հիման վրա հարկային մարմինների միջև իրականացվող տեղեկատվության փոխանակման արդյունքում առաջացած խնդիրների մասով լուծումների քննարկման, ինչպես նաև հնարավոր ռիսկերի վերլուծության վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աշոտ Մուրադյան

Նարինե Ֆահրադյան

Հեղինե Նաջարյան

09.10.2024թ